Հաստատված է

ՀՀ ԳԱԱ նախագահության 2024 թ.

նոյեմբերի 1-ի թիվ 14/1833 - 19 որոշմամբ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ (ՏՆՕՐԵՆ) ՊԱՇՏՈՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ (ՏՆՕՐԵՆ) ՆՇԱՆԱԿՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ) համակարգում ներառված պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների (տնօրենների) թափուր պաշտոնի համար ընտրություններն իրականացվում են «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ ԳԱԱ կանոնադրության, ՀՀ ԳԱԱ համակարգում ներառված ՊՈԱԿ-ների կանոնադրության համապատասխան և սույն կարգով:

2. ՀՀ ԳԱԱ համակարգում ներառված պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների ընտրության կարգը հաստատում է ՀՀ ԳԱԱ նախագահությունը: Ընտրակարգով սահմանվում են տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի հայտարարման, թեկնածուների առաջադրման, մրցույթի անցկացման և ամփոփման կարգը:

3. Պետական կազմակերպության գործադիր մարմնի (տնօրենի) թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է ՀՀ ԳԱԱ և համապատասխան կազմակերպության կայքէջերում և մամուլում:

4. Հայտարարությունում պետք է նշվեն թեկնածուին առաջադրվող պահանջները, առաջադրման իրավունք ունեցողների ցանկը, պահանջվող

փաստաթղթերի ցանկը, պահանջվող փաստաթղթերի ներկայացման վայրը և ներկայացման ժամկետները:

5. Տնօրենի պաշտոնի թեկնածություններն առաջադրվում են օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող անձանց թվից, ովքեր պետք է ունենան կազմակերպության հիմնական գիտական ուղղություններից մեկի ոլորտում գիտական աստիճան, ընտրության պահին լինեն մինչև 65 տարեկան, ունենան գիտական գործունեության փորձ, մասնագիտական ուղղվածությամբ համապատասխանեն գիտական կազմակերպության հիմնական գիտական ուղղություններից մեկին:

6. Կազմակերպության տնօրենի ընտրությանը մասնակցելու համար թեկնածու առաջադրելու իրավունք ունեն՝ համապատասխան կազմակերպության գիտական անձնակազմը, համապատասխան բաժանմունքի բյուրոն և տվյալ մասնագիտության գծով ՀՀ ԳԱԱ-ի անդամները: Թեկնածուները կարող են նաև ինքնաառաջդրվել: Ինքնառաջադրվել չեն կարող այն անձիք, ում թեկնածությունը քննարկվել է կազմակերպության գիտական անձնակազմի ժողովում:

7. Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում չի կարող առաջադրվել/ինքնաառաջադրվել այն անձը՝

ա) որը դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը կամ լիազորությունների իրականացմանը.

գ) խուսափել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից.

դ) որը դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

ե) որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել կամ որը զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

զ) որը նախորդ 3 տարվա ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և կազմակերպության պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

8. Գիտական անձնակազմի ժողովի կողմից առաջադրվող թեկնածուն որոշվում է փակ, գաղտնի քվեարկությամբ՝ ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Եթե կազմակերպության գիտական անձնակազմի ժողովում երկու թեկնածուներ ստացել են հավասար թվով առավելագույն ձայներ, ապա կազմակերպության գիտական անձնակազմը կարող է առաջադրել երկու թեկնածուների:

9. Թեկնածուները մրցույթի հայտարարությունում նշված ժամկետի ընթացքում պահանջվող փաստաթղթերը ներկայացնում են ՀՀ ԳԱԱ իրավաբանական և անձնակազմի կառավարման բաժին: Թեկնածուները պարտավոր են ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում, որտեղ նշվում են հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), փաստացի բնակության վայրը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն,

բ) ինքնակենսագրություն,

գ) անձնագիր կամ նույնականացման քարտ (բնօրինակը և պատճենը, իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակների սկանավորված տարբերակը),

դ) 1 գունավոր լուսանկար՝3x4 չափի (էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ էլեկտրոնային),

ե) բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմը (դիպլոմները) (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը,

զ) գիտական աստիճանը և/կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը,

է) աշխատանքային գործունեությունը հավաստող տեղեկանք,

ը) առաջադրումը հաստատող փաստաթուղթ՝ համապատասխան բաժանմունքի բյուրոյի կամ կազմակերպության գիտական անձնակազմի կողմից առաջադրման դեպքում,

թ) կազմակերպության զարգացման ծրագիր,

ժ) հրատարակված աշխատությունների և հոդվածների ցանկ՝ հաստատված աշխատավայրի ղեկավարի կողմից:

10. Մրցույթի հայտարարությունում նշված ժամկետի ավարտից հետո ներկայացված բոլոր փաստաթղթերը տրամադրվում են համապատասխան բաժանմունքին՝ բաժանմունքի բյուրոյում քննարկելու համար: Ներկայացված բոլոր թեկնածությունները քննարկվում են բաժանմունքի բյուրոյի նիստում: Քննարկման արդյունքում բաժանմունքի բյուրոն կազմակերպության գիտական անձնակազմի կողմից առաջադրված թեկնածուին երաշխավորում է նախագահության նիստում քննարկման համար: Ներկայացված մյուս թեկնածությունները բաժանմունքի բյուրոյում քննարկվելուց հետո ներկայացվում են բաժանմունքի ընդհանուր ժողովի քննարկմանը:

Բաժանմունքի բյուրոյի և բաժանմունքի ընդհանուր ժողովի նիստերն իրավազոր են, եթե նիստին մասնակցում են ցուցակային կազմի կեսից ավելին:

Բաժանմունքի ընդհանուր ժողովը բյուրոյի կողմից ներկայացված թեկնածությունները քննարկելուց հետո, փակ, գաղտնի քվեարկությամբ նախագահության քննարկմանն է երաշխավորում նիստի մասնակիցների ձայների մեծամասնությամբ որոշված թեկնածուին :

11. Նախագահության նիստին նախագահողը ներկայացնում է թեկնածուների ցուցակը: Նիստին թեկնածուների ներկայությունը պարտադիր է: Բացակայող թեկնածուի մասին՝ լսելով նախագահողի պարզաբանումները, նախագահությունն ընդունում է որոշում թեկնածությունը նիստում քննարկելու կամ քննարկումից հանելու վերաբերյալ:

12. Նախագահության նիստում թեկնածուները ներկայացնում են կազմակերպության զարգացման ծրագիրը: Թեկնածուների ելույթներից հետո սկսվում է թեկնածությունների քննարկումը: Թեկնածությունների քննարկումը

դադարեցվում է նախագահողի առաջարկությամբ՝ նախագահության անդամների համաձայնությամբ:

13. Քննարկումից և լրացուցիչ ելույթներից հետո ինքնաբացարկ չհայտնած թեկնածուների տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն) մտցվում են քվեաթերթիկ:

14. Նիստը նախագահողի առաջարկով փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար նախագահության որոշմամբ նախագահության անդամներից ընտրվում է 3 հոգուց ոչ պակաս /կենտ թվով/ հաշվիչ հանձնաժողով: Թեկնածուները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

15. ՀՀ ԳԱԱ նախագահության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Նախագահության բացակա անդամի ձայնը չի փոխանցվում:

16. Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն: Քվեաթերթիկում մեկից ավելի թեկնածուների առկայության դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ հավաքած ձայների քանակի նվազման հաջորդականության:

17. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին, ապա նախագահությունը հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

Ընտրված է համարվում ՀՀ ԳԱԱ նախագահության բոլոր անդամների ձայների պարզ մեծամասնությունը ստացած թեկնածուն: Ընտրության արդյունքների վերաբերյալ ընդունվում է ՀՀ ԳԱԱ նախագահության որոշում: Եթե քվեարկության արդյունքում թեկնածուներից ոչ մեկը չի հավաքում համապատասխան թվով ձայներ, մրցույթը համարվում է չկայացած:

18. Նախագահությունը հաշվիչ հանձնաժողովի արձանագրության տվյալների հրապարակումից հետո ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

ա/ տնօրեն ընտրվելու մասին,

բ/ մրցույթը չկայացած ճանաչելու մասին:

19. Տնօրեն ընտրելու մասին որոշման հիման վրա ՀՀ ԳԱԱ նախագահը հրամանագրում է կազմակերպության տնօրենին և նրա հետ կնքում աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով:

20. ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ հիմքով տնօրենի լիազորությունների դադարեցման դեպքում նախագահությունը հայտարարում է տնօրենի ընտրության նոր մրցույթ՝ սույն ընտրակարգի համաձայն:

21. Մինչև սույն կարգին համապատասխան պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու մրցույթի արդյունքներով պաշտոնի նշանակումը՝ տնօրենի թափուր պաշտոնը կարող է ժամանակավորապես զբաղեցնել այն անձը, ով բավարարում է սույն կարգով և այլ իրավական ակտերով տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները և ում պաշտոնի է նշանակում ՀՀ ԳԱԱ նախագահը: